ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

175 (2841)

7 դեկտեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՉ ՄԻ ԽՈՍՔ ԻՐԱԿԱՆ ՉԷ

«Իմ խնդիրը ՀՀ ապագան է, եւ իմ լիազորությունների շրջանակը ՀՀ Սահմանադրությունը տալիս է ՀՀ ապագայի վերաբերյալ. կենտրոնացված եմ այդ խնդրի վրա». երեկ խորհրդարանում հայտարարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի հարցին: Նույն Փաշինյանի ղեկավարած ՔՊ 2021թ. նախընտրական ծրագրում, սակայն, սեւով սպիտակի վրա գրված է. «Արտաքին եւ անվտանգային քաղաքականության գլխավոր առաջնահերթություններից են լինելու Ղարաբաղյան հակամարտության խաղաղ եւ համապարփակ կարգավորումը՝ արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման միջոցով Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումը, ինչպես նաեւ մշակութային ու կրոնական ժառանգության պահպանումը եւ հումանիտար խնդիրների լուծումը: Հայաստանի Հանրապետությունն օգտագործելու է իր ողջ ներուժը վերոնշյալ նպատակներին հասնելու համար՝ առաջնորդվելով մեր պետական շահերով եւ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության հրամայականով»: Նախընտրական այս խոստումը Նիկոլ Փաշինյանը չի կատարել: Իրականությունն էլ այն է, որ Հայաստանն Արցախին միայնակ թողեց, ավելին՝ Փաշինյանը սեպտեմբերյան ագրեսիայի օրերին հայտարարեց, որ ԼՂՀ խաղաղ բնակչությանը վտանգ չի սպառնում: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրում առանձին հատված էլ կա, որը վերնագրված է՝ «Արցախի հիմնախնդիր»: Այս բաժնում կարդում ենք. «Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումը տեսնում ենք Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացման եւ Արցախի կարգավիճակի վերջնական հստակեցման տեսքով՝ առաջնորդվելով «Անջատում՝ հանուն փրկության» սկզբունքով: «Անջատում՝ հանուն փրկության» սկզբունքն իրավունք է տալիս ժողովուրդներին ինչպես անջատվել որեւէ պետությունից, երբ առկա է խտրականության, մարդու իրավունքների լայնածավալ խախտումների կամ ցեղասպանության ռիսկ, այնպես էլ բացառում է միացումը մի պետության հետ, եթե միավորումը բերելու է վերը նշված հետեւանքներին»: Այս խոստումներից որեւէ կետի իրացման ուղղությամբ, սակայն, Նիկոլ Փաշինյանի ՔՊ-ն չի գնացել, այլ կերպ ասած՝ խաբել է ընտրողներին:



Հշխանությունները որոշել են ձերբազատվել ընդդիմադիր բոլոր համայնքապետերից: Ինչպես հայտնի է, ընդամենը օրեր առաջ ՔՊ-ն Ալավերդիում ուժով իշխանություն վերցրեց եւ պաշտոնանկ արեց համայնքապետին, որը ներկայացնում էր «Ապրելու երկիր» կուսակցությունը: «Ժողովուրդ» օրաթերթին լուրեր հասան, որ հաջորդը Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանն է. թեեւ նա վերջերս ակնհայտորեն փոխել է իր վերաբերմունքը Նիկոլ Փաշինյանի իշխանության նկատմամբ, բայց, ամեն դեպքում, Առուշանյանին եւս ՔՊ-ականները որպես իրենց ընդդիմադիր են դիտարկում: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, Առուշանյանին ՔՊ-ականները որոշել են արժանացնել Ալավերդու համայնքապետի ճակատագրին ու ազատվել նրանից: Ավելին՝ իշխանականները հրահանգել են իրավապահներին գործընթաց սկսել Առուշանյանի նկատմամբ ու ուսումնասիրել նրան պատկանող բիզնեսները, չարաշահումներ գտնել ու այս ճանապարհով հասնել նրա հեռացմանը: Ինչով կավարտվեն զարգացումները, դժվար չէ կանխատեսել: Հիշեցնենք, որ ՔՊ-ի թիրախում է նաեւ Վարդենիս խոշորացված համայնքը, քանի որ սեպտեմբերի 19-ից սկսված հանրահավաքային պայքարին հրապարակավ միացավ նաեւ սահմանամերձ Վարդենիսի ընդդիմադիր խմբակցությունը: Այս մասով նոյեմբերի 1-ին ՔՊ-ն վարչության նիստ էր արել եւ հայտարարել, որ կանդրադառնա նաեւ այս համայնքին:



Այսօր ԱԺ-ն վերջապես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ կընտրի կամ կտապալի ընտրությունը: Թեկնածուները երկուսն են՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանը եւ հանձնաժողովի վարչության պետ Նարինե Ավետիսյանը: Երկուսն էլ ինքնաառաջադրվել են: Երեկ ԱԺ-ում Հայկուհի Հարությունյանի թեկնածության քննարկումը իշխող մեծամասնությունն իսկական մարտաֆիլմի էր վերածել, ամբողջ թիմով հարձակում էին գործել Հայկուհի Հարությունյանի վրա, մեկը մյուսին հերթ չտալով՝ սուր ու հարձակողական, թիրախավորված հարցեր էին ուղղում նրան: Ինչպես մեզ փոխանցեցին, ԱԺ նիստից դուրս եւս ՔՊ-ականները արհամարհական վերաբերմունք են ցուցաբերել Հայկուհի Հարությունյանի նկատմամբ. նրան թողել էին միջանցքում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականները երկուշաբթի օրը նիստ են արել եւ թեժ քննարկում ունեցել Հայկուհի Հարությունյանի մասով. իշխանականները բուռն քննարկումներից հետո որոշել են այսօր դեմ քվեարկել նրա թեկնածությանը: Իսկ ի՞նչ է ընկած ՔՊ-ականների այս անբարեհաճ վերաբերմունքի հիմքում. մեզ հաջողվեց պարզել, որ իշխանականները համարում են, թե Հայկուհի Հարությունյանն իրենց վերահսկողությունից դուրս է: Նախ՝ ՔՊ-ականներին բարկացրել է Հայկուհի Հարությունյանի այն բացահայտումը, որ հայտարարագրերի, պաշտոնի անհամատեղելիության եւ շահերի բախման մասերով ՔՊ խմբակցության 25 պատգամավոր է անցել: Բացի այս, ՔՊ-ականները վրդովվել են նաեւ նրանից, որ վերջերս մամուլում Հայկուհի Հարությունյանի հետ թեժ քննարկումից մանրամասներ են հայտնվել, ինչպես նաեւ ԵՄ-Հայաստան քաղհասարակություն պլատֆորմը կոշտ հայտարարություն էր տարածել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



Իրավապահ մարմինները գործընթաց են սկսել ՀՀ-ում հանքարդյունահանմամբ զբաղվող ընկերությունների գործունեության մասով: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ այս գործընթացը սկսվել է ՔՊ-ական պատգամավորի կնոջ անունով գրանցված ընկերության կողմից ապօրինի ձեռնարկատիրական գործունեության բացահայտումից հետո: Առաջիկայում ուշագրավ զարգացումներ են սպասվում: Ինչպես հայտնի է, նոյեմբերի 28-ին «Հետքը»-ը հրապարակել էր, որ ոստիկանությունը բերման է ենթարկել ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կնոջ անունով գրանցված՝ հանքարդյունահանմամբ զբաղվող ընկերության տնօրենին ու աշխատակիցներին: Նոյեմբերի 27-ին իրավապահները ապօրինի գործող հանքի տարածքից նրանց տեղափոխել են քննչական մարմին: Ավազի հանքի աշխատանքը դադարեցվել է: Պատգամավորի կնոջ ընկերության կողմից ավազի ապօրինի արդյունահանման հետեւանքով պետությանը խոշոր վնաս է պատճառվել: Ըստ դատախազության՝ 2023թ.-ի մարտի 13-ին Ռանչպար բնակավայրի վարչական տարածքում, առանց ընդերքօգտագործման իրավունքի, 6750 խորանարդ մետր ավազակոպճային լեռնային զանգված է տեղահանվել, որի հետեւանքով 2.4 հեկտար հողաբուսական շերտ է վնասվել: Ապօրինի ձեռնարկատիրության, հողը փչացնելու, ընդերքի պահպանման եւ օգտագործման կանոնները խախտելու հատկանիշներով (երեք դրվագ) քրեական վարույթ է նախաձեռնվել:

ՊԱՏՄԵՑ

Ի՞ՆՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎԱԳԱՆԻՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դեկտեմբերի 5-ին լարված իրավիճակ էր Ալավերդիում: Ավագանու 27 անդամից 14-ը համայնքի ղեկավար, «Ապրելու երկիր» խմբակցությունը ներկայացնող Արկադի Թամազյանին անվստահություն է հայտնել եւ համայնքի ղեկավար ընտրել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից Դավիթ Ղումաշյանին, որը լիազորությունները կստանձնի ուրբաթ օրը: Այս փոփոխությունը հնարավոր է եղել, քանի որ ավագանու «Ապրելու երկիր» խմբակցությունից Սիմոն Զախարովը դուրս է եկել խմբակցությունից եւ աջակցել ՔՊ-ին: Այդ լարված իրավիճակում հնչել են վիրավորանքներ, մասնավորապես՝ համայնքի ղեկավար Արկադի Թամազյանը Արեն Մկրտչյանին անվանեց սրիկա, վերջինս էլ նրան ասաց՝ «չմո»: Այս ամենի մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արկադի Թամազյանի հետ:

-Պարոն Թամազյան, եթե ընդհանուր առմամբ ամփոփենք Ալավերդիում կատարվածը, ի՞նչ տեղի ունեցավ ավագանիում: Ի վերջո, իշխանությունը հասավ իր նպատակին եւ Ձեզ պաշտոնանկ արեց: Ի՞նչ գնահատական կտաք:

-Եթե իշխանության նպատակն է տապալել, համարենք՝ տապալեցին մարդկանց սահմանադրական իրավունքը, իսկապես տապալեցին, ոստիկանական բիրտ ուժեր կիրառելով՝ զոռբայությամբ փորձում են իշխանություն վերցնեն: Իհարկե, դեռ չեն հասել իրենց վերջնական նպատակին. կա դատական համակարգ ու այլ տարբերակներ: Հարկադրանքով ցանկանում են տիրանալ համայնքի կառավարմանը: Դրանից ավել էլ ի՞նչ ասես:

-Ի՞նչ եք պատրաստվում անել, պարոն Թամազյան, ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու:

-Ես չգիտեմ, այսօր մեզ մոտ շատ պայթյունավտանգ իրավիճակ է, շատ լուրջ իրավիճակ է առաջացել, չեմ կարող ասել՝ ինչ քայլերի կգնա ժողովուրդը կամ կգնա, թե չի գնա. ամեն դեպքում, իրավական ճանապարհով փորձելու ենք անել հնարավոր ամեն ինչ: Դիմելու ենք դատարան, եւ պայքարը, ինչպես եւ երեկ ես հայտարարեցի, ավելի մեծ թափ է առնելու:

-Բայց դա ինչ-որ արդյունք, ըստ Ձեզ, կտա՞:

-Չեմ կարող ասել, բայց դատարանի որոշումից է կախված:

-Պարոն Թամազյան, ասացիք, որ ժողովուրդը մտադիր է ինչ-որ քայլեր անել, խոսքը ակցիաների մասի՞ն է:

-Չեմ կարող ասել: Ժողովուրդն ամեն ինչ տեսավ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից ինչ պահվածք դրսեւորեցին: Իրենք ավելի վատ են տրամադրված եւ ավելի վատ են խոսում հենց իրենց կուսակիցների եւ բոլոր նրանց նկատմամբ, ում նախկինում ընտրել էին:

-Ինչ որ քննարկում եղե՞լ է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ երեկվանից հետո:

-Ո՛չ, հանդիպեմ, ի՞նչ քննարկեմ: Օրինական ճանապարհը կլիներ նոր ընտրությունների գնալը:

-Այսինքն՝ հնարավո՞ր է՝ Ալավերդիում նոր ընտրություն լինի:

-Ես չեմ կարող ասել՝ նոր ընտրություն կլինի, թե ոչ: Դատարանը կարող է կասեցնել ՔՊ-ի որոշումը, կարող է եւ չկասեցնել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԱՆՏԵՍԵԼ ԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Խորհրդարանում երեկ քննարկվում էր Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրության հարցը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այն անցնում էր բավական լարված մթնոլորտում, եւ ՔՊ խմբակցության պատգամավորները, կարծես թե, ագրեսիվ էին տրամադրված թեկնածու Հայկուհի Հարությունյանի հանդեպ:

Այդ վերաբերմունքը դրսեւորվել է նաեւ ընդմիջման ժամանակ: «Ժողովուրդ» օրաթերթը ֆիքսեց, որ ՔՊ-ն արհամարհական է վերաբերվել նրան, անգամ ընդմիջմանը չեն ուղեկցել գլխադասային հանձնաժողով, ինչպես լինում էր նախկինում:

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը նրան ուղեկցել է Արծվիկ Մինասյանի աշխատասենյակ, քանի որ Հարությունյանը մնացել էր միջանցքներում:

«Մենք այսօր շատ օրինակներ բերեցինք, թե ինչպես է Արեւմուտքը կարողանում խաբել: Այ, բնավ չէի ցանկանա, որ Հայաստանի ժողովրդին նորից խաբեին այդ իբր բարեկամները: Բանն այն է, որ մենք այս մասին արդեն խոսել ենք: Ինչ վերաբերում է Ֆրանսիային եւ այդ «Բաստիոն» զրահամեքենաներին, դա վերացման ենթակա է: Դա ակնհայտ է անգամ այն իրավիճակում, որը ծավալվում է (Ուկրաինայում) հատուկ ռազմական գործողության համատեքստում: Ես մանրամասն դա մեկնաբանել եմ նոյեմբերի 22-ի ճեպազրույցում: Եթե շատ ԶԼՄ-ներ, որոնք կապ ունեն Հայաստանի ներկա իշխանությունների հետ, այդ տեղեկությունը խեղաթյուրված չներկայացնեին, չզբաղվեին հակալրագրողական գործունեությամբ, այլ հնարավորություն տային իրենց երկրի ժողովրդին ծանոթանալ մեջբերումներին եւ ուղղակի խոսքին, հավանաբար, ավելի հասկանալի կլիներ, որ իսկապես հերթական անգամ Հայաստանի ժողովրդին, ցավոք, մատուցում են «ֆալշիվկա»: Ինչո՞ւ «ֆալշիվկա». որովհետեւ «սոլյանկայի» այդ հավաքածուն տարբեր երկրների արտադրության ռազմական տեխնիկայից երբեք չի նպաստել պաշտպանունակության բարձրացմանը: Դա հո ակնհայտ է»,- նշել է նա:

Նա անդրադարձել է Հայաստանի ՊՆ հայտարարությանն այն մասին, որ բոլոր խնդիրները պետք է լուծել գործընկերության մթնոլորտում՝ նշելով, որ Ռուսաստանը միայն կարող է ողջունել դա. «ՌԴ պաշտպանության նախարարությունը նույնպիսի տամադրվածություն ունի»:

ԶԱԽԱՐՈՎԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

«Բնավ չէի ցանկանա, որ Հայաստանի ժողովրդին նորից խաբեն արեւմտյան իբր բարեկամները»,-հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

ԿՍԱՀՄԱՆՎԵՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Երեւան համայնքում ավտոկայանատեղիների 2023 թվականի վճարները սահմանվել են Երեւանի ավագանու 27.12.2022 թվականի թիվ 687-Ն որոշմամբ եւ գործելու են մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ժամը 24:00-ն. այս մասին հայտնում է Երեւանի քաղաքապետարանը: «Հետեւաբար՝ 2023 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում կատարված տարեկան 12.000 դրամ վճարը տարածվելու է միայն 2023 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում կայանման վրա: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 2024 թ. ավտոկայանատեղիների դրույքաչափերը կսահմանվեն Երեւանի ավագանու՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ին կայանալիք հերթական նիստի ընթացքում»,- ասված է հայտարարությունում:

ՄԱՐԱԲՅԱՆԸ ԸՆՏՐՎԵՑ

Ազգային ժողովի հաշվիչ հանձնախմբի նախագահ Նարեկ Բաբայանը ներկայացրեց դեկտեմբերի 5-ին կատարված քվեարկությունների արդյունքները: Ըստ այդմ՝ Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնում ընտրվեց Հակոբ Միհրանյանը:

Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր ընտրվեց Սերգեյ Մարաբյանը: ԱԺ 107 պատգամավորներից քվեարկությանը մասնակցել էին 68-ը: Սերգեյ Մարաբյանի օգտին կողմ էր քվեարկել 68 պատգամավոր, մնացած թեկնածուները կողմ ձայն չէին ստացել:

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամ ընտրվեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրված Հասմիկ Հակոբյանը:

Հիշեցնենք, որ երեկ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը խորհրդարանում հայտարարեց, թե Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորի թեկնածու Ռուբիկ Մխիթարյանը վիրահատվել եւ այդ պատճառով երեկ ներկա չէր դատավորի ընտրության հարցով քննարկմանը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԲԴԽ նախագահը ստում է: Բանն այն է, որ, մեր տեղեկություններով, Մխիթարյանը վիրահատվել էր դեռ օգոստոսին: Ավելին՝ նա երեկ այդ պահին Վերաքննիչ քրեական դատարանում աշխատանքի էր:

Ավելի ուշ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնեց, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը փոխել է իր որոշումը:

Մինչ այս ՔՊ-ականները որոշում էին ունեցել ընտրել Ռուբիկ Մխիթարյանին, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ խմբակցության ներսում թեժ քննարկում է եղել, որից հետո որոշում է փոխվել: Ըստ այդմ՝ ՔՊ-ականները որոշել են դատավոր ընտրել Սերգեյ Մարաբյանին: Երեկ արդեն մեր տեղեկությունը հաստատվեց:

ԱԼԻԵՎՆ ՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

«Ես այն ժամանակ ասացի, որ եթե «անջատողական» առաջնորդները հանձնվեն, ապա նրանց նկատմամբ կարող է կիրառվել համաներում: Ցավոք սրտի, իմ խոսքերը դարձյալ պատշաճ կերպով չգնահատվեցին: Այսօր առաջնորդներն Ադրբեջանում են: Նրանք ուզում էին գալ այստեղ եւ մեզ սպառնում էին, որ տանկերով կգան Ադրբեջան եւ Բաքու: Այսօր նրանք սպասում են Ադրբեջանում դատավարությանը եւ մեր դատական համակարգի վերջնական վճռին»,- նախագահ Իլհամ Ալիեւն ասել է «Ղարաբաղ. վերադարձ տուն 30 տարի անց. ձեռքբերումներ եւ դժվարություններ» համաժողովին, որը կազմակերպել է ԶՀԳ համալսարանը Միջազգային հարաբերությունների վերլուծության կենտրոնի հետ համատեղ:

«Մենք հույս ունեինք, որ կկարողանանք կապ հաստատել Ղարաբաղի հայության ներկայացուցիչների հետ, բայց, ցավոք, այն մարդիկ, որոնք յուրովի մենաշնորհել էին իշխանությունն այնտեղ, թույլ չտվեցին, որ դա տեղի ունենա: Բացի այդ, սեպտեմբերին տեղի ունեցավ երկու իրադարձություն, որը մեզ համար նշանակում էր անցնել կարմիր գիծը: Նախ՝ Հայաստանի վարչապետի շնորհավորանքը, այսպես կոչված, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» անկախության կապակցությամբ, որը լիովին հակասում էր Հայաստանի վարչապետի ասածին եւ ստորագրմանը, որովհետեւ անցած հոկտեմբերին Հայաստանը եւ նրա վարչապետը պաշտոնապես ճանաչեցին Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս: Սրանից եւ նույն ոգով բազմաթիվ հայտարարություններից հետո շնորհավորական նամակ ուղարկելը մեզ համար դարձավ միանգամայն անընդունելի եւ խիստ հակասական գործողություն»,- նշել է նա:

Նրա խոսքով՝ ղարաբաղյան երկրորդ պատերազմի ավարտից հետո իրենց դիրքորոշումը հստակ էր. Ղարաբաղում բնակվողներն ունեն երկու ընտրություն՝ կամ նրանք դառնում են Ադրբեջանի քաղաքացի, եւ նրանց համար ստեղծված են բոլոր իրավական դաշտերը, կամ այլ բնակության վայր են ընտրում:

Խոսելով խաղաղության պայմանագրի մասին՝ Ալիեւը նշել է. «Հայաստանի վարչապետի, Ադրբեջանի նախագահի եւ Եվրախորհրդի ղեկավարի բրյուսելյան ձեւաչափով հաջորդ հանդիպումը պետք է միտված լինի արդյունքի, դրան պետք է լավ պատրաստվել: Խաղաղության պայմանագիրը փոքր փաստաթուղթ է՝ 6-7 էջի սահմաններում, մոտ 20 կետով», - ասել է նա:

ՊԱՏԱՍԽԱՆԵՑ

ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆՆ ՈՒ ԱԼԱՎԵՐԴՈՒ ԴԵՊՔԵՐԸ

ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արեն Մկրտչյանը լրագրողների հետ զրույցում նշեց, որ Ալավերդի քաղաքի ավագանու ՔՊ խմբակցությունը, ՏԻՄ օրենքի համաձայն, գումարել է նիստ՝ համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու օրակարգով՝ իրացնելով իր իրավունքները:

«Նիստի օրը՝ առավոտյան ժամը 8-ին, Ալավերդու համայնքապետ Արկադի Թամազյանը համայնքապետարանի դիմաց հրավիրել է հանրահավաք, եւ այդ ժամանակ փորձ է արվել հանրահավաքի մասնակիցներին հրավիրել շենքի ներս, փորձել են մուտքերը փակել: Դրանով խոչընդոտ կստեղծվեր ավագանու անդամների՝ իրենց իրավունքներն իրացնելու հարցում:

Մենք տարածել ենք հայտարարություն, որ հանրահավաքի մարդաշատությունն ապահովելու նպատակով զանգեր են արվել մանկապարտեզների, մշակույթի տների տնօրեններին, բուժամբուլատորիաների տնօրեններին, վարչական ղեկավարներին, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին եւ հորդորել, կոչ արել ժամը 8-ին լինել համայնքապետարանի մոտ, իբր, ժամը 9-ին բյուջեի քննարկում է տեղի ունենալու: Սա՝ այն դեպքում, որ ժամը 10:00-ին համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու հարցն էր քննարկվելու:

Նիստերի դահլիճի դուռը եղել է փակ, իսկ անվստահության հարցի ժամը կարգավորվում է օրենքով, այսինքն՝ եթե ավագանու անդամները ժամը 10:00-ին չկարողանային լինել դահլիճում, հիմա էլ ասելու էին՝ 10:20 է եղել, ապօրինի է:

Քվեատուփ, քվեաթերթիկներ դրված չեն եղել, աշխատակազմից որեւէ անդամ չի եղել՝ ապահովելու նիստի ընթացքը, բոլորը հանրահավաքի են եղել: Սա ժողովրդավարությո՞ւն է, թե՞ ոչ»,-ասաց նա:

Արեն Մկրտչյանը նաեւ հավելեց, որ «Ապրելու երկիր» կուսակցության անդամները ներխուժել են, շրջել են քվեատուփը քվեարկության ընթացքում, դուրս են թափել քվեաթերթիկները եւ քվեարկած 12 քվեաթերթիկ դարձել է անվավեր: Անձնական վիրավորանքների տեղատարափ տեղաց, եւ հնչեց դրան համարժեք պատասխան, բայց, միեւնույնն է, ես Ալավերդի քաղաքի բնակիչներից առհասարակ կատարվածի համար ներողություն եմ խնդրում»,- ասաց նա:

ՔՊ-ական պատգամավորն ընդգծեց, որ ՔՊ-ն նախընտրել է ոչ թե իր համախոհներին կոչ անել գալ համայնքապետարանի մոտ, որը հղի էր բախումների վտանգով, այլ դիմել է իրավապահներին, որպեսզի նրանք ապահովեն ավագանու անխոչընդոտ գործունեության անցկացումը:

«Ժողովուրդ» օրաթերթի այն դիտարկմանը, որ ՔՊ-ն չի հաշտվում, որ պարտվել է, եւ փորձում է խլել իշխանությունը Ալավերդիում, Արեն Մկրտչյանն ասաց. «ՔՊ-ն Ալավերդիում ընդդիմություն է, իսկ ընդդիմության նպատակն իշխանության գալն է, եւ շատ նորմալ է, որ ընդդիմությունն ուզում է դառնալ իշխանություն իրավական ճանապարհով:

Ընտրությունների արդյունքներով ՔՊ-ն ստացել է 12 մանդատ, «Ապրելու երկիրը»՝ նույնպես 12 մանդատ. հաղթող չի եղել, եւ «Հայ ազգային կոնգրես»-ը 2 տոկոս՝ 340 ձայն է ստացել»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԳՈՐԾՈՒՂՎԻ ԱՄՆ ⇨

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը գործուղվում է ԱՄՆ:

«Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանին 2023 թվականի դեկտեմբերի 7-8-ը ներառյալ գործուղել Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք)՝ ՄԱԿ-ի գլխամասում կայանալիք The Universality of the International Criminal Court: On the importance of ratifying the Rome Statute and the Agreement on the Privileges and Immunities of the ICC խորագրով կլոր սեղան-քննարկմանը մասնակցելու նպատակով»,- նշված է որոշման մեջ:

ԱՊՕՐԻՆԻ ԱՌԵՎՏՈՒՐ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Նախորդ շաբաթվանից սկսած՝ մինչ օրս, Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի առեւտրի եւ ծառայությունների վարչությունը Երեւանի փողոցներից առգրավել է բացօթյա ապօրինի առեւտրի առարկա հանդիսացող շուրջ 400 կգ սիգ տեսակի ձուկ եւ ձկնկիթ: «Ժողովուրդ» օրաթերթին այս մասին տեղեկացրեց Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը:

«Հիշեցնեմ, որ սիգի ձվադրման ժամանակահատվածով պայմանավորված՝ 2023 թվականի նոյեմբերի 25-ից մինչեւ 2024 թվականի հունվարի 20-ը ներառյալ հսկողության ուժեղացված միջոցառումներ են իրականացվելու Սեւանա լճում եւ Հայաստանի ողջ տարածքում»,- նշել է Կոստանյանը:

ՍԱՀԱԿԱՇՎԻԼԻՆ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին գրառում է կատարել՝ դիմելով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Նա նշել է, թե Ռուսաստանն արգելել է հայկական գրեթե բոլոր գյուղմթերքների եւ կոնյակի ներկրումը, սակայն այս արգելքը պետք է նախազգուշացում լինի Փաշինյանի համար, քանի որ Պուտինը ոչ թե սկսել է չսիրել հայկական կոնյակը, այլ հենց Փաշինյանին, իսկ էմբարգոն նրան իշխանությունից հեռացնելու հերթական քայլն է:

«Ուզում եմ նորից կրկնել Հայաստանի վարչապետի համար՝ հարգելի՛ Նիկոլ, փախի՛ր: Փախի՛ր արագ, առանց հետ նայելու, ՀԱՊԿ-ից, ԵվրԱզԷՍ-ից, վազի՛ր դեպի Եվրամիություն, ՆԱՏՕ, դեպի նոր տարածաշրջանային միություններ:

Բայց ամենակարեւորը՝ փախի՛ր Ռուսաստանից, փրկի՛ր քեզ եւ հայոց պետականությունը:

Պուտինը նման է բուլդոգի. նա կծում է ու բաց չի թողնում, քանի դեռ ատամները չի սեղմել:

Խուսափե՛ք դրանից ողջ մնալու համար»,- գրել է Սաակաշվիլին:

ԳՐԱԴՌՈՒՄ

ՄԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

«Թվիթեր»-ի իր էջում ամերիկացի հայտնի բլոգեր եւ ռազմական փորձագետ Դավիթ դե Մորոն (David De Morrow) անդրադարձել է ԱՄՆ քաղաքացի Էրիկ Թոմաս Կրիմերի՝ Ռուսաստանի կառավարության կողմից «շինծու» մեղադրանքների պատճառով Հայաստանում «պատանդ» մնալուն:

Եւ, ահա, ինչ է գրում բլոգերը:

Նա նախ ներկայացնում է, թե ով է Էրիկ Կրիմերը. վերջինս 2005թ. ավարտել է Աթենքի միջնակարգ դպրոցը, այնուհետեւ սովորել Օհայոյի համալսարանում, տեղափոխվել է Ռուսաստան եւ աշխատանքի ընդունվել MITP-ում՝ որպես անգլերենի ուսուցիչ: Այդ աշխատանքի շրջանակներում նա թարգմանել է ՌԴ պաշտպանության նախարարության որոշ գաղտնի փաստաթղթեր:

2017թ.՝ գիշերը տուն հասնելուց անմիջապես հետո, Կրիմերին առեւանգել են ՌԴ-ի ՓՀԲ-ի աշխատակիցները, ժամերով նրան անազատության մեջ պահել, հոգեբանորեն խոշտանգել, ատրճանակը գլխին դրած՝ պատասխաններ պահանջել՝ կասկածելով նրան լրտեսության մեջ:

Որեւէ ապացույց չունենալով՝ կարճ ժամանակ անց նրան հայտնել են, որ թմրանյութ են գտել Մոսկվայի Տվերսկայա-Յամսկայա փողոցի 3-րդ հասցեից, սակայն Կրիմերը այդ հասցեում չի ապրել:

Հետո նրան ստիպել են ստորագրել մի փաստաթղթի տակ՝ ասելով, որ մեղադրանք չկա, սակայն պետք է անհապաղ լքի երկիրը:

Կրիմերը հեռացել է Ռուսաստանից, այցելել է Եվրոպական երկրներ, Վրաստան, այնուհետեւ որոշել է ընկերուհու հետ մեկ օրով այցելել Հայաստան:

2021 թվականին՝ ՀՀ պետական սահմանն անցնելուց հետո, նրան հայտնել են, որ չի կարող հեռանալ Հայաստանից:

Շուրջ 2 տարի է՝ Կրիմերը չի կարողանում հեռանալ Հայաստանից, նա դիմել է ԱՄՆ դեսպանատուն, Սենատի անդամներին, Հայաստանի կառավարություն, տարբեր պաշտոնյաների, մարմինների, սակայն որեւէ արձագանք չկա:

Ամերիկացի բլոգերը նշում է, որ սա հերթական դեպքն է, երբ ռուսները ամերիկացուն լրտեսության համար են մեղադրում, սակայն չունենալով որեւէ ապացույց՝ որոշում են, որ եթե լրտես չէ, գոնե թմրանյութի համար դատեն: Իսկ Հայաստանն էլ, որպես ՀԱՊԿ անդամ, մասնակից է Ռուսաստանի կողմից կեղծ մեղադրանքներին:

Նա հիշեցնում է, թե ինչ մեծ մարդասիրական օգնություն է տվել ԱՄՆ-ն Հայաստանին, եւ որ Հայաստանը փորձում է նոր հարաբերություններ ստեղծել ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, Արեւմուտքի հետ, սակայն ամերիկացիներին հետապնդելու գործընթացին մասնակցելը միայն կխանգարի:

Բլոգերը գրում է, որ տարօրինակ է, որ ԱՄՆ-ից օգնություն ստացող երկիրը շարունակում է պատանդ պահել Ռուսաստանի կառավարության կողմից քաղաքական պատճառներով հետապնդվող մարդուն:

Բլոգերը նշում է, որ Կրիմերը ցանկանում է վերադառնալ իր տուն 11-ամյա որդու եւ տարեց մոր հետ, որոնց չի տեսել տարիներ շարունակ, սակայն Հայաստանը թույլ չի տալիս լքել իր տարածքը:

«Ժողովուրդ» օրաթերթին հաջողվեց պարզել, որ պրոուկրաինական հայացքներ ունեցող Էրիկ Կրիմերի մասով ՌԴ-ում վարույթն իրականացնող մարմին չներկայանալու պատճառաբանությամբ 2017 թվականի օգոստոսի 10-ին Էրիկ Կրիմերի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, նրան մեղադրանք է առաջադրվել՝ ՌԴ քրեական օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ 2021թ. արդեն հայտարարվել է միջպետական հետախուզում, որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը: Նրա պաշտպանությունն իրականացնում է «Էմ Ջի Էմ Փարտներս» ընկերության թիմը, որը Կրիմերի ազատ տեղաշարժի իրավունքը սահմանափակելու վերաբերյալ գրություններ է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին եւ ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետին: Ընկերությունից լրատվամիջոցին հայտնեցին, որ սպասում են իրենց ուղարկած գրությունների պատասխաններին, որից հետո կանդրադառնան գործին:

«Ժողովուրդ» օրաթերթը արձանագրում է, որ փաստացի սուվերեն երկրի իրավապահ մարմինները ռուսներից ավելի ռուսասեր են եւ ԱՄՆ քաղաքացուն «պատանդ» են պահում Հայաստանում, մինչդեռ հարյուրավոր գործերով ՀՀ քաղաքացի հանդիսացող մեղադրյալներին հանձնելու մեր միջնորդությունները մերժվում են ռազմավարական դաշնակցի կողմից: Այսքանից հետո հարց է առաջանում՝ մի՞թե Հայաստանը Ռուսաստանի «ֆորպոստը» չէ, ինչպես դեռեւս 20 տարի առաջ հայտարարել էր ՌԴ Պետդումայի նախագահ Բորիս Գրիզլովը:

ՌԻՇԱԳՐԱՎ

ԵՐԵԽԱ Է ՄԱՀԱՑԵԼ

Դեկտեմբերի 6-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 09:20-ի սահմաններում «Արարատ» բժշկական կենտրոնից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Արարատի մարզային վարչության օպերատիվ կենտրոն ահազանգ է ստացվել, որ «Արարատ» շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը կանչով մեկնել է Սուրենավան գյուղ, որտեղ հայտնաբերել են երեխայի դի. հաղորդում է Shamshyan.com-ը:

Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ առավոտյան գյուղի դպրոցի 3 երեխաներ դպրոց գալիս են եղել, երբ թափառական 5 շուն հարձակվել են երեխաների վրա: Վերջիններս փախել են շների հարձակումից, սակայն դեպքի վայր ժամանած շտապօգնության բժիշկները արձանագրել են երեխաներից մեկի կենսաբանական մահ:

Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ մահացածը նույն գյուղի բնակիչ 7-ամյա Ալիկ Գ.-ն է:

Դեպքի փաստով ոստիկանության Արարատի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվել, որոնք փոխանցվել են Հայաստանի քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժին:

Դեպքը տեղի է ունեցել Սուրենավանի գյուղապետարանի հարեւանությամբ գտնվող ակումբի մոտ, որից քիչ հեռու գտնվում է դպրոցը:

ԱԱԾ–Ն ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆ

Ադրբեջանի փորձագիտական շրջանակներում որպես ռազմական փորձագետ եւ հայագետ ներկայացող, հայտնի եւ «լուրջ մասնագետ» Թելման Գասիմովի՝ ս.թ. դեկտեմբերի 5-ին տարածած տեսագրության վերաբերյալ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնում է, որ Թելման Գասիմովը նշված տեսագրությունը ստացել է դեռեւս 2017թ. նոյեմբերին երկքաղաքացի Ա. Ք.-ից, որը տեսագրել է շենքը, որտեղ «ծնվել եւ մեծացել է» Թ.Գասիմովը, եւ ուղարկել նրան: Թ.Գասիմովը 6 տարի անց այդ տեսանյութի մոնտաժման եղանակով (տեսագրությանն ավելացնելով իր ձայնը) էժանագին քարոզչությամբ փորձում է հայ հասարակության մեջ տարածել խուճապային տրամադրություններ եւ դրանով իր «կշիռը» բարձրացնել ադրբեջանական լսարանում:

Կոչ ենք անում գասիմովներին դուրս գալ հիվանդ երեւակայություններից:

ՀՀ ԶԼՄ-ներին եւ ազգաբնակչությանը հորդորում ենք զերծ մնալ ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից տարածվող եւ չստուգված, հերյուրանքներ պարունակող տվյալներն ու նյութերը հրապարակելուց հասարակության շրջանում անհարկի լարվածություն եւ խուճապ չառաջացնելու համար:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը հավաստիացնում է, որ օպերատիվ իրավիճակը տարբեր ուղղություններով գտնվում է լիարժեք վերահսկողության տակ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՋԱՏԵԼ ԵՆ՝ ԳՈՒՄԱՐԻ ԴԻՄԱՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Հայկ Գեղամի Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա խարդախությամբ կատարել է հափշտակություններ, մասնակցել է Վարդան Ղուկասյանի կողմից ստեղծված եւ ղեկավարած հանցավոր կազմակերպությանը, դրա կազմում խարդախությամբ կատարած հանցավոր կազմակերպությանը, դրա կազմում խարդախությամբ կատարել է առանձնապես խոշոր չափի գույքի հափշտակություն, գույքային պարտավորություն ստանձնելուն հարկադրելու փորձ, ինչպես նաեւ թաքցրել եւ խեղաթյուրել է հանցավոր ճանապարհով ստացված գույքի ծագումը:

Այսպես, 2018թ. փետրվար ամսից մինչեւ 2018թ. մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում ՌԴ Մոսկվայի մարզի Միտիշի քաղաքում ՀՀ քաղաքացի Հայկ Գեղամի Խաչատրյանը, միասնական դիտավորությամբ չարաշահելով մի շարք անձանց վստահությունը, խաբեությամբ նրանցից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի գումարներ, մասնավորապես՝ 2018թ. փետրվար ամսին Հայկ Խաչատրյանը, ՌԴ Մոսկվայի մարզի Միտիշի քաղաքում գտնվելու ընթացքում Մուրադ Ամոյանից եւ նրա մորից՝ Կզե Կակոյանից տեղեկանալով, որ Մուրադ Ամոյանի եղբարը՝ Արտակ Ամոյանը, ավազակային հարձակում կատարելու մեղադրանքով գտնվում է կալանքի տակ ՌԴ «Վոլոկոլամսկ» քննչական մեկուսարանում, առանձնապես խոշոր չափերով գումարներ հափշտակելու միասնական դիտավորությամբ նրանց վստահեցրել է, թե, իբր, ՌԴ իրավապահ համակարգում ունի մեծ կապեր եւ հնարավորություններ, կարող է որոշակի գումարի դիմաց Արտակ Ամոյանին օրենքով սահմանված կարգով ազատել կալանքից եւ նույնիսկ դատից: Կզե Կակոյանը, վստահելով Հայկ Խաչատրյանի խոստումներին, վերջինիս պահանջով 2018թ. փետրվար ամսից մինչեւ 2018թ. մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում ՌԴ Մոսկվայի մարզի Միտիշի քաղաքում Հայկ Խաչատրյանին առձեռն մաս-մաս տվել է առանձնապես խոշոր չափերով՝ 14.544.000 ՀՀ դրամին համարժեք ընդհանուր 1.800.000 ՌԴ ռուբլի: Գումարները ստանալուց հետո Հայկ Խաչատրյանը, չկատարելով իր խոստումը կամ դրան ուղղված որեւէ գործողություն, խարդախությամբ հափշտակել է այն: Այսինքն՝ Հայկ Գեղամի Խաչատրյանին մեղսագրվում է պատժի սպառնալիքով արգելված, մեղավորությամբ կատարված հանցանքի կատարում, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով /համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին/: Բացի այդ, Հայկ Խաչատրյանը, օգտվելով Մուրադ Ամոյանի մոտ արդեն իսկ ձեռք բերած վստահությունից, Երեւանում տաքսի ծառայության գրասենյակ հիմնելու, այն վերանորոգելու, երկու ամսով Երեւանում «UBER» տաքսի ծառայությունը գովազդելու եւ տաքսի ծառայության համար հատուկ «Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմեքենաներ ձեռք բերելու խոստման դիմաց, Մուրադ Ամոյանից եւ վերջինիս ընկերուհի Ռուզաննա Սեդրակյանից մաս- մաս առձեռն վերցրել է 80.800.000 ՀՀ դրամին համարժեք 10.000.000 ՌԴ ռուբլի գումար եւ չկատարելով իր խոստումը կամ դրան ուղղված որեւէ գործողություն՝ խարդախությամբ հափշտակել է այն:

ՔՆՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 5-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 73 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՊԱՐՏՎԵԼԸ՝ ՎԱՏ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ

««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ Արա Խլոյանի՝ 2021թ. հունիսի 25-ի հրամանով՝ Արտակ Հարությունյանն ազատվել է ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի պետի պաշտոնից: Վերջինս դիմել է դատարան: 2022թ. ապրիլի 27-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը վճռել է հայցը բավարարել, անվավեր ճանաչել Ա. Խլոյանի վերոհիշյալ հրամանը, Ա. Հարությունյանին վերականգնել իր նախկին աշխատանքում, ««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից հօգուտ Ա. Հարությունյանի բռնագանձել միջին աշխատավարձը՝ հաշվարկը կատարելով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար: Ա. Հարությունյանը կրկին դատարան է դիմել, այս անգամ՝ ««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ Ռոբերտ Ալիխանյանի 2023թ. մարտի 24-ի թիվ 67-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջով: Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Ա. Հարությունյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողության ձևով:

Դիմելով դատարան՝ նա հայտնել է, որ 2023թ. մարտի 23-ին ««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ժ. Սահաբալյանի եւ այդ ՊՈԱԿ-ի աշխատակցի կողմից ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ Ռ. Ալիխանյանին ներկայացվել են զեկուցագրեր, որով հայտնել են, որ 2023թ. մարտի 19-ին «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղում մասնաճյուղի ղեկավար Ա. Հարությունյանը քաղաքացուն թույլատրել է 7-րդ պահաբաժնում իրականացնել փայտանյութի ինքնապատրաստում, որ Ա. Հարությունյանը խախտել է ազգային պարկի տնօրենի բանավոր ցուցումը՝առանց ղեկավարությանը տեղեկացնելու հանգստյան օրով ինքնագլուխ գործունեություն է ծավալել: Հայցվորը դատարանին հայտնել է, որ 2023թ. մարտի 24-ին ստանալով նշված զեկուցագրերը՝ինքը բացատրություն է ներկայացրել տնօրենի Ժ/Պ Ռ. Ալիխանյանին, որով հայտնել է, որ վերահսկել է փայտանյութի ինքնապատրաստման աշխատանքները, իսկ նշված օրն աշխատելը բխել է բացառապես իր աշխատանքային պարտականություններից:

Հայցադիմումի պատասխանում ««Դիլիջան» ազգային պարկի» տնօրենի ԺՊ Ռ. Ալիխանյանը հայտնել է, որ հայցապահանջն անհիմն է, զուրկ է փաստական եւ իրավական հիմնավորումներից: Հուլիսի 31-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը վճռել է հայցը բավարարել, անվավեր ճանաչել Ռ. Ալիխանյանի 2023թ. մարտի 23-ի թիվ 67-Ա հրամանը, ««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից հօգուտ Ա. Հարությունյանի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, ««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից պետական բյուջե բռնագանձել 20.000 դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Այդ վճռի դեմ ««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը վերաքննիչ բողոք է ներկայացրել, այն վարույթ է ընդունվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆԴՐԱԴԱՐՁԱՎ

ՔԵՐՈԲՅԱՆԸ՝ ԼԱՐՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերին Լարսի անցակետում առաջացած խնդիրը եղել է ուժեղացված հսկողության արդյունք. այժմ հայկական մեքենաները հիմնականում անցնում են Լարսի անցակետով:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ասաց Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը կառավարություն-ԱԺ հարցուպատասխանին՝ անդրադառնալով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Լիլիթ Ստեփանյանի հարցին:

«Այս պահին մեքենաները հիմնականում անցնում են Լարսի անցակետով: Խնդիրներն առաջացել են ուժեղացված հսկողության արդյունքում Լարսի անցակետում, որից հետո մենք նախաձեռնել ենք քննարկումներ մի քանի մակարդակներում խնդիրների եւ դրանց լուծման վերաբերյալ: Անցյալ շաբաթ օրը մեքենաների թողունակությունը վերականգնվեց»,-ասաց Քերոբյանը:

Նախարարը վստահեցրեց, որ կառավարության համար շատ կարեւոր է, որ Հայաստանում արտադրված ապրանքները լինեն բարձրակարգ, ոչ միայն որպեսզի հասանելիությունն այդ շուկաներին լինի ավելի մեծ ու ավելի լավ գնով, այլ նաեւ Հայաստանի բնակչության համար: «Այդ առումով մենք վճռական ենք, որ հնարավորինս կարճ ժամանակում Հայաստանում արտադրվող ապրանքները դառնան բարձրակարգ, բարձր ստանդարտների»,-նշեց նա:

Վերջին շրջանում Վերին Լարսի անցակետում գյուղմթերք ու այլ ապրանքներ Ռուսաստան արտահանող հայկական բեռնատարները խնդիրների էին բախվել, օրեր շարունակ հայկական բեռնատարները Վերին Լարսի անցակետի հերթերում էին:

«Ռոսսելխոզնադզոր»-ը (ՌԴ անասնաբուժական եւ բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայություն) նոյեմբերի 29-ին հայտարարել է, որ 2023 ընթացքում Հայաստանից մատակարարված ծաղկի եւ պտուղ-բանջարեղենային արտադրանքներում գրանցվել է կարանտինային վնասակար օրգանիզմների հայտնաբերման դեպքերի աճ:

Հայաստանը ԵԱՏՄ-ում հրատապ խորհրդատվություն էր հրավիրել ՀՀ-ից Ռուսաստան արտահանման խնդրի հարցով:

ՍԿԱՆԴԱԼ

«ՀԱՅԲՈՒՍԱԿ»-Ն ՈՒ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԸ

Համալսարանների շուրջ առաջացած կրքերը շարունակվում են: Հայաստանյան բարձրագույն ուսումնական հաստատությունները մեկը մյուսի հետեւից հայտնվում են սկանդալների կենտրոնում՝ արժանանալով երբեմն հասարակության, երբեմն էլ իրավապահների ուշադրությանը:

Այժմ էլ իր վարքով աչքի է ընկել «Հայբուսակ» համալսարանը: «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունը ստանում է բողոքներ քաղաքացիներից, որոնք պատմում են, որ համալսարանը կարծես ցանկանում է կամ արդեն իսկ դուրս է եկել բարոյականության նորմերից:

Քաղաքացիները պատմում են, որ այն ուսանողները, որոնք չեն կարողանում վարձը ժամանակին վճարել, հայտնվում են անհարմար դրության մեջ: «Անհարմար դրությունը» ոչ այլ ինչ է, քան վարձավճարի տոկոսների մարում: Փաստորեն, ստացվում է հետեւյալ պատկերը. ուսանողները չեն կարողանում վճարել ուսման վարձը, փոխարենը նրանց ոչ թե նախազգուշացնում են կամ նկատողություն տալիս, ոչ թե ժամանակ են տալիս վարձը մարելու կամ վատագույն դեպքում հեռացնում համալսարանից, այլ ասում են, որ իրենց վարձավճարը 10 %-ով ավել պետք է վճարեն:

Օրինակ՝ 500.000 դրամ տարեկան սահմանված վարձի դեպքում ուսանողը, ըստ կիսամյակի 250.000 ՀՀ դրամ վճարելու փոխարեն, պարտավորվել է վճարել 25.000 դրամ ավել: Այլ կերպ ասած՝ ուսումնական հաստատությունը վերածվել է բանկի՝ ոչ այնքան շահավետ պայմաններով ու բավականին բարձր տոկոսադրույքով:

«Ժողովուրդ» օրաթերթը օրեր շարունակ փորձեց կապ հաստատել «Հայբուսակ» համալսարանի հետ՝ պարզելու, թե ինչ է կատարվում համալսարանում, սակայն մեր ջանքերը նրանց հետ կապվելու պսակվեցին անհաջողությամբ: Հայբուսակցիները համառորեն նույնիսկ ընդունարանի հեռախոսին չեն պատասխանում:

Այդուհանդերձ, «Ժողովուրդ» օրաթերթը հարցում ուղարկեց համալսարան, որի պատասխանը ստանալուն պես կհրապարակենք:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ

ԿԵՆՏՐՈՆԻ ԲԵՌՆԱԹԱՓՈՒՄ

Երեւանի քաղաքապետարանի որոշման համաձայն՝ նոյեմբերի 13-ից 2,5 տոննա եւ ավելի քաշ ունեցող բեռնատարները Երեւանի փոքր կենտրոն պետք է մտնեին երեկոյան 21:00-ից մինչեւ առավոտյան 07:00-ը:

«Երթեւեկությունը կարգելվի կենտրոնի բեռնաթափմանն ուղղված համալիր ծրագրի շրջանակում նոյեմբերի 13-ից Խանջյանից մինչեւ Սարյան եւ Գրիգոր Լուսավորչից մինչեւ Կորյուն հատվածներում, որը ներառում է շուրջ 40 փողոց: «Ֆորդ տրանզիտ» կամ «Գազել» եւ նմանատիպ մակնիշի մեքենաներն ընկնում են այդ սահմանափակումների տակ»,- ասված էր որոշման մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել է, որ այս օրերին՝ վերը նշված ժամերին, այդ փողոցներում կարող ենք հանդիպել բեռնատարների: Երեւանի կենտրոնում ողջ օրվա ընթացքում բեռնատարներն անարգել երթեւեկում են: Ստացվում է՝ որոշումը կայացվել է, ու ինչպես միշտ, չկա որեւէ վերահսկող մարմին, որը կհետեւի որոշման իրագործմանը, ինչի պատճառով էլ Երեւանի երթեւեկությունը ողջ օրվա ընթացքում խաթարված է, խցանումներն արդեն դարձել են ամենժամյա, ու այդ հարցը դարձել է մերօրյա ամենաանլուծելի խնդիրը:

ԴԵՐԵՐԸ ԿՀՍՏԱԿԵՑՎԵՆ

Կառավարությունը հավանություն է տվել Քաղաքաշինության կոմիտեի մշակած ««Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթին:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Քաղաքաշինության կոմիտեից հայտնում են, որ փաթեթով առաջարկվում է սահմանել բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառում պետական լիազոր մարմնի, մարզպետների, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, ինչպես նաեւ նոր կառուցվող կամ կառուցված բազմաբնակարան շենքի կառուցապատողի պարտականությունները:

Առաջին խմբին վերապահվող լիազորությունները հիմնականում վերաբերում են օրենսդրական դաշտի բարելավմանն ուղղված առաջարկների մշակմանը, բնակֆոնդի տեխնիկական վիճակի վերաբերյալ տվյալների վարմանը, խորհրդատվական նյութերի մշակմանը, ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրերի մշտադիտարկմանը:

Նոր կառուցվող կամ կառուցված բազմաբնակարան շենքի կառուցապատողի համար սահմանում են պարտականություններ, որոնք վերաբերում են շենքի կառուցումից հետո՝ մինչեւ սեփականատերերի կողմից կառավարման մարմնի ընտրությունը, սեփականատերերի անունից կառավարման մարմին ձեւավորելուն եւ շենքի կառուցման մեկնարկից մինչեւ կառավարման մարմնի ձեւավորում ընկած ժամանակահատվածում ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի օտարման առանձնահատկություններին: Կառուցապատողը կունենա նաեւ բազմաբնակարան շենքի կառուցումից հետո շենքի փաստաթղթերը կառավարման մարմնին փոխանցելու պարտավորություն:

Օրենքով սահմանված կազմով կամ ժամկետում փաստաթղթերը չփոխանցելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսվում է պատասխանատվություն:

ԲՅՈՒՋԵ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության համար Հայաստանում բյուջեի նախագծով նախատեսվել են օժանդակության ծրագրեր՝ 47.3 մլրդ դրամի չափով, ընդ որում՝ սա ԼՂ-ից բռնի տեղահանված հայրենակիցներին աջակցության ամբողջ ծավալը չէ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ասաց Հայաստանի ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը Ազգային ժողովի նիստում Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին նախագծի քննարկմանը:

Հովհաննիսյանը հայտնեց, որ Ազգային ժողով ներկայացնելուց հետո 2024թ. պետական բյուջեի նախագծի եկամուտներում, ծախսերում եւ դեֆիցիտում առաջացել է փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն:

«Դա հիմնականում պայմանավորված է ԱԺ-ում քննարկումների արդյունքում ներկայացված առաջարկները բյուջեում արտացոլելու անհրաժեշտությամբ ու նաեւ Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչության աջակցության ծրագրերի նախատեսմամբ: 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության համար նախատեսվել են օժանդակության ծրագրեր՝ 47.3 մլրդ դրամի չափով, որից կրթության ոլորտի գծով՝ 1.2 մլրդ դրամի չափով, այդ թվում՝ 900 մլն դրամը Հայաստանում կրթություն ստացող 4360 ուսանողների ուսման վարձի նպատակով, 300 մլն դրամը՝ ուսուցիչների օժանդակության ծրագրի գծով: Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտի գծով նախատեսվել է 46.1 մլրդ դրամ, որից կենսաթոշակների գծով՝ 22.5 մլրդ դրամ, ժողովրդագրական վիճակի բարելավում ծրագրի գծով՝ 2.6 մլրդ դրամ, սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում ծրագրի գծով՝ 1.6 մլրդ դրամ, անապահով սոցիալական խմբերին աջակցություն ծրագրի գծով՝ 1.5 մլրդ դրամ, ԼՂ-ից բռնի տեղահանվածներին ժամանակավոր կացարանում բնակվելու եւ կոմունալ ծառայությունների ծախսերի կատարմանն օժանդակելու համար սոցիալական աջակցության միջոցառման գծով՝ 15 մլրդ դրամ»,-ասաց նախարարը:

Ընդ որում՝ ըստ նախարարի՝ սա ԼՂ-ից բռնի տեղահանված հայրենակիցներին աջակցության ամբողջ ծավալը չէ: Ներկայումս քննարկումներ են գնում բնակարանային ծրագրերի, վերապատրաստումների, աշխատանքի տեղավորման եւ բնականոն կյանքին վերադառնալու այլ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ, որոնց հաստատման ժամանակ կապահովվեն ֆինանսական անհրաժեշտ միջոցներ:

Հավելենք, որ պահուստային ֆոնդը 2024թ. նախատեսվել է աննախադեպ 156 մլրդ դրամ մակարդակում: Կառավարությունը վստահ է, որ այս միջոցները բավարար են ֆիսկալ ռիսկերն ապահովագրելու եւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայրենակիցների կարիքները հոգալու համար:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

220 ՀԱՅՏ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Հանրապետությունում 2022 թվականից իրականացվող սահմանամերձ գյուղերում ոռոգության ֆինանսավորմամբ սեփական տուն կառուցելու ծրագրի շրջանակում արդեն հաստատվել է 220 հայտ:

Նրանց թվում կան մարդիկ, որոնք պետական աջակցությամբ տրամադրվող ֆինանսական միջոցների առաջին, երկրորդ մասերը ստացել են, եւ տուն կառուցելու գործընթացն ակտիվ փուլում է: Ըստ ծրագրի՝ պետությունը բանկերի, ֆինանսական կառույցների միջոցով տրամադրում է մինչեւ 16 մլն դրամի վարկ տուն կառուցելու համար: Ամբողջ գումարը սուբսիդավորում է պետությունը, այսինքն՝ քաղաքացու վրա ոչ մի ֆինանսական բեռ չի դրվում: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների առանձին գործառույթներ համակարգող խորհրդական Գայանե Ղարագյոզյանը լրագրողների հետ զրույցում նշեց, որ դիմելիության առումով առավել ակտիվ է Տավուշի մարզը, որին հաջորդում է Սյունիքը:

«Այս ընթացքում ծրագրում կատարվել են որոշակի լավարկումներ, եւ դրանց արդյունքում հիմա քաղաքացիների շրջանում որոշակի ակտիվություն է նկատվում: Ծրագրի նպատակն է Հայաստանի սահմանամերձ գյուղական բնակավայրերի զարգացումը, ժողովրդագրական, ցածր երկամուտներ ունեցող ընտանիքների բնակարանային խնդիրների լուծումը, գյուղական բնակավայրերի բնակֆոնդի թարմացումը»,-ասաց Գայանե Ղարագյոզյանը:

Այս պահին դեռ չկան ԼՂ-ից բռնի տեղահանվածների կողմից հայտեր, սակայն ակնկալվում է, որ առաջիկայում դիմելիություն կլինի նաեւ իրենց շրջանում: Ծրագրի պայմանների համաձայն՝ շահառու դառնալու համար ամուսիններից մեկը պետք է լինի ՀՀ քաղաքացի: Քանի որ հիմա շատ արցախցիներ այդ գործընթացի մեջ են, սպասվում է, որ քաղաքացիություն ստանալուց հետո իրենք նույնպես կհետաքրքրվեն այս ծրագրով: Ծրագրից կարող են օգտվել գրանցված ամուսնություն ունեցող անձինք, տարիքային սահմանափակում չկա, երեխաներ ունենալու կամ չունենալու հանգամանքը եւս հաշվի չի առնվում: Նրանք պետք է ունենան հողատարածք սահմանամերձ բնակավայրերից մեկում, ունենան նախագիծ, շինթույլտվություն: Այդ փաստաթղթերով պետք է մոտենան բանկ ու կատարեն սովորական վարկային գործարք: Մինչեւ 16 մլն-ի դեպքում քաղաքացու վարկունակությունը չի գնահատվում, քանի որ ամբողջ գումարը պետությունն է ապահովում: Պետությունը կարող է առաջարկել նաեւ տան տիպային նախագծերի ցանկ, որից կարող է քաղաքացին օգտվել:

Գործընկեր բանկերի ու ֆինանսական կառույցների թիվը ներկայում 5-ն է, որոնց ցանկն ընդլայնելու միտում կա: 2024 թվականի համար այս ծրագրով պետությունը նախատեսում է հատկացնել 1,2 մլրդ դրամ:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՏՄՈՒՄ Է

ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾԻ ՀՈՒՇԵՐԻՑ

Ռոմանը 5 տարեկան էր, երբ ընտանիքը Լենինգրադից վերադարձավ հայրենի Առաջաձոր գյուղ: Այստեղ նա դպրոց գնաց ու ուսում ստացավ: «Գյուղին շուտ հարմարվեց ու շատ սիրեց: Շատ էր կապված գյուղի հետ. երբ մի տեղ էր գնում, փորձում էր ինչքան հնարավոր է շուտ վերադառնալ: Մտադիր էր հետագայում էլ ապրել Առաջաձորում: Դպրոցն ավարտելուց հետո՝ 2022թ.-ին, անցավ պարտադիր ժամկետային ծառայության»,-«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմում է քույրը՝ Անին:

Ռոման Թելյանը ընդամենը 19 տարեկան էր, բայց իր սպորտային կազմվածքով, պատրաստվածությամբ ու խելացիությամբ մշտապես հրամանատարության ուշադրության կենտրոնում էր գտնվում: Քույրն ասում է՝ կարծես պատրաստի զինվորական լիներ:

«Ռոմանը հետախույզ էր: Հրամանատարական կազմը նրան առաջին իսկ օրվանից նկատեց եւ ընտրեց այդ խմբում: Երբ արդեն իմացանք պատերազմի մասին, փորձեցինք զանգել, կապ հաստատել նրա հետ, սակայն անարդյունք էր: Սկզբից մտածեցինք՝ նա է անջատել, որովհետեւ, երբ դիրքերում լարվում էր իրավիճակը, անջատում էր, որպեսզի չզանգենք, սակայն հետո պարզվեց, որ ողջ Արցախում է բացակայում հեռախոսակապը: Միայն սեպտեմբերի 24-ին գնացել է Առաջաձոր՝ իրենց տուն, բայց ընտանիքի անդամներին չի գտել: Գյուղն արդեն ամբողջությամբ տարհանել էին»,- պատմում է քույրը:

Անին պատմում է, որ միայն հաջորդ օրը երեկոյան Ռոմանին հաջողվեց կապ հաստատել ընտանիքի անդամների հետ: Շատերի պես նրանց ընտանիքը եւս ուներ վառելիքի խնդիր: Ռոմանը սեպտեմբերի 25-ին նույնպես գնաց «Հայկազով» զորամասի պահեստ՝ վառելիք ստանալու, որտեղ էլ եւ պայթյունի ժամանակ ստացավ տարբեր կարգի այրվածքներ: Ռոմանի մարմնի 70 տոկոսն այրված էր, իսկ վիճակը գնահատվում էր ծանր: Նրան հնարավորինս շուտ տեղափոխել են Երեւանի այրվածքաբանական կենտրոն, սակայն ուղիղ 9 օր հիվանդանոցում պայքարելուց հետո մահացավ եւ Ռոմանը:

«Հիմա, որ այսպես նայում ենք ու տեսնում, որ մարդիկ, այս ամեն ինչից բացի, նաեւ իրենց որդիների, ամուսինների ու եղբայրների գերեզմաններն են կորցրել, մխիթարվում ենք, որ մենք գոնե կարող ենք գերեզմանին այցելել»,- ասում է Անին:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀԱՍՏԱՏԵՑ ⇨ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը մասնակցելու է «Եվրատեսիլ 2024» երգի հեղինակավոր մրցույթին, որը տեղի է ունենալու մայիսի 7-ին, 9-ին եւ 11-ին Շվեդիայի Մալմյո քաղաքում:

Ինստագրամյան պաշտոնական էջում մրցույթի կազմակերպիչները հայտնում են. «37 երկրների հանրային հեռարձակողներ կմասնակցեն կենդանի երաժշտության ամենամեծ իրադարձությանը՝ «Եվրատեսիլ»-ին, որը տեղի կունենա հաջորդ տարվա մայիսին Շվեդիայի Մալմյո քաղաքում»:

Ըստ պաշտոնական աղբյուրի՝ մասնակից հեռարձակող երկրներն են Ալբանիան, Հայաստանը, Ավստրալիան, Ավստրիան, Ադրբեջանը, Բելգիան, Խորվաթիան, Կիպրոսը, Չեխիան, Դանիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Վրաստանը, Գերմանիան, Հունաստանը, Իսլանդիան, Իռլանդիան, Իսրայելը, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Մոլդովան, Հոլանդիան, Նորվեգիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Սան Մարինոն, Սերբիան, Սլովենիան, Իսպանիան, Շվեդիան, Շվեյցարիան, Ուկրաինան եւ Միացյալ Թագավորությունը:

Հավելենք, որ «Եվրատեսիլ 2024»-ը հյուրընկալվելու է Շվեդիայում՝ «Եվրատեսիլ 2023»-ում Շվեդիայի ներկայացուցիչ Լորինի հաղթանակի շնորհիվ: Երգչուհին մրցույթում հաղթել էր նաեւ 2012 թվականին:

Հիշեցնենք, որ «Եվրատեսիլ 2023» երգի մրցույթում Հայաստանը ներկայացրել էր Բրյունետը «Future Lover» երգով եւ զբաղեցրել էր 14-րդ հորիզոնականը:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱՆ ԿՎԱՃԱՌՎԻ

Սաուդյան Արաբիան ցանկանում է գնել ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգան. հաղորդում է Saxo Bank-ի կայքը:

«Սաուդյան Արաբիայի տնտեսության կառուցվածքային վերափոխումը ուղղված է նավթի եկամուտներից կախվածության նվազեցմանը, երկիրը տուրիզմի, հանգստի եւ զվարճանքների կենտրոն դարձնելուն:

Սպասվում է, որ առաջիկայում նավթի գինը կհասնի 150 դոլարի՝ մեկ բարելի դիմաց: Եթե նավթի բարձր գնի ֆոնին կանաչ վերափոխումը դանդաղի, Սաուդյան Արաբիան տեսնում է ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի աջակցությամբ ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգան գնելու հնարավորություն»,- նշվում է Saxo Bank-ի զեկույցում:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Սաուդյան Արաբիան փորձում է սաուդյան առաջատար ակումբների համար Չեմպիոնների լիգայի մասնակցության իրավունք ստանալ: Հիշեցնենք, որ 2034թ. աշխարհի առաջնությունն անցկացվելու է Սաուդյան Արաբիայում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

Նոյեմբերի 7-ին տեղի ունեցած ՀՖՖ գործադիր կոմիտեի հերթական նիստի արդյունքում հստակեցվեց, որ հերթական՝ 24-րդ ժողովը կանցկացվի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 13:00-ին, ՀՖՖ գրասենյակում:

ՀՖՖ նախագահի պաշտոնավարման ժամկետի լրացմամբ պայմանավորված՝ ժողովն ընտրական է լինելու. պետք է ընտրվի ՀՖՖ նոր նախագահ: Մինչ այս պահը որպես նախագահի թեկնածուներ հաստատվել են Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին կիսապաշտպան Արազ Օզբիլիսը, որն իր կարիերան ավարտել է այս ամիս, եւ արդեն նաեւ ՀՖՖ ներկայիս նախագահ Արմեն Մելիքբեկյանը:

«Միշտ ասել եմ, որ կարիերայի ավարտին հայկական ֆուտբոլին օգուտ տամ: Կարծում եմ, որ հայկական ֆուտբոլն այժմ կարեւոր խաչմերուկի վրա է: Ես իմ թեկնածությունն եմ դնում ՀՖՖ նախագահի ընտրություններում: Իմ փորձով ու նվիրվածությամբ կարող եմ մեծ օգուտ բերել հայկական ֆուտբոլին»,- լրագրողների հետ զրույցում ասել էր Օզբիլիսը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՖՖ նախագահի մյուս թեկնածուի՝ ներկայիս նախագահ եւ նախկին մարզական լրագրող Արմեն Մելիքբեկյանի անվան շուրջ տարակարծություններն ամենաշատն էին, եւ իշխանական վերնախավը կարծում էր, որ պետք չէ նրան որպես թեկնածու առաջադրել, քանի որ մրցակցություն, որպես այդպիսին, չի լինի այդ դեպքում: Կարծես թե, քաղաքական էլիտան մնացել էր առանց թեկնածուի: Ավելի ուշ Մելիքբեկյանը հաստատեց իր թեկնածությունը՝ այսպիսով արձանագրելով մեկ բան. իշխանությունից թույլտվություն ունի, կամ, այլ կերպ ասած, նրան համաձայնություն են տվել, քանի որ նա իշխող քաղաքական ուժի սիրելիներից է, չնայած որ հենց նրա պաշտոնավարման տարիներին է, որ հայկական ֆուտբոլը անդունդ է գլորվում:

Մ. ՂԱՋԱՐՅԱՆ

ԿԱՐԱԳԵՐԸ՝ ԳՎԱՐԴԻՈԼԱՅԻՆ

Անգլիական «Լիվերպուլի» նախկին պաշտպան, այժմ ֆուտբոլային հեռուստամեկնաբան Ջեյմի Կարագերը պատասխանել է Անգլիայի չեմպիոն, գավաթակիր, Չեմպիոնների լիգայի գավաթակիր, Եվրոպայի սուպերգավաթակիր «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզչին, որը Կարագերին խորհուրդ էր տվել իրեն քննադատելուց առաջ հիշել, որ կարիերայի ընթացքում ոչ մի անգամ չի նվաճել Պրեմիեր լիգայի տիտղոսը:

«Հավանաբար, ես էլ կնվաճեի տիտղոս, եթե «Լիվերպուլը» պատկաներ մի ամբողջ պետության եւ այդքան չանտեսեր կանոնները, որպեսզի Պրեմիեր լիգան մեզ մեղադրեր 115 անգամ:

Բայց իրականում «Տոտենհեմի» դեմ խաղից (3:3) հետո ես գովել էի Պեպի թիմին»,- սոցիալական ցանցերում գրել է Կարագերը: Այս տարվա փետրվարին Անգլիայի Պրեմիեր լիգան «Մանչեսթեր Սիթիին» մեղադրել էր ֆինանսական կանոնների 115 խախտման համար: Մանչեսթերյան ակումբի սեփականատերն է Արաբական Միացյալ Էմիրությունների փոխնախագահ Շեյխ Մանսուրը:

● Դեկտեմբերի 8-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Գիշատիչների խնջույքը» ներկայացումը: Տոմսերի արեժքը՝4000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. ՀՀ տարածքում կառուցված բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից հիպոթեքային վարկով բնակարան ձեռք բերած վարկառուն միաժամանակ վարձու աշխատող եւ անհատ ձեռնարկատեր է. տվյալ դեպքում ինչպե՞ս է կատարվում եկամտային հարկի գումարների վերադարձը:

Գարիկ Մուրադյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության՝ 19.02.2015թ. N 205-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ եթե վարկառուն միաժամանակ վարձու աշխատող եւ անհատ ձեռնարկատեր է, ապա հաշվետու տարվա համար ներկայացված տարեկան հաշվարկի հիման վրա հաշվարկված եւ վճարված եկամտային հարկի գումարների վերադարձը կատարվում է տվյալ տարվա ընթացքում հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների հանրագումարի եւ տվյալ տարվա եռամսյակների ամիսների համար վճարված եւ վերադարձված (վերադարձման ենթակա) եկամտային հարկի հանրագումարի դրական տարբերության չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն ՀՀ կառավարության՝ 19.02.2015թ. N 205-Ն որոշման 4-րդ կետի՝ վարձու աշխատողին հաշվետու եռամսյակի որեւէ ամսում հաշվարկված աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից տարբերվող այլ հարկվող եկամուտներ վճարված լինելու դեպքում այդ եկամուտների մասով հաշվարկված եւ վճարված եկամտային հարկի գումարները վերադարձման ենթակա չեն:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի հաստատություն ընդունվելու համար ո՞ւմ պետք է դիմի քաղաքացին:

Լուսինե Օհանյան (57 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին (այսուհետ՝ տարածքային մարմին), որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը, տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա, համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գնահատված կարիքների համաձայն՝ խնամքի ծառայությունները տրամադրվում են ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը որոշել է օգտվել միայն ու միայն իր ընտանիքին պատկանող ընկերությունների ապրանքատեսակներից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել է, որ ԱԺ դահլիճում բոլոր պատգամավորների առջեւ դրված է «Բյուրեղ» ապրանքանիշի ջուր, իսկ Խաչատուր Սուքիասյանը որոշել է տարբերվել մյուսներից. նրա առջեւ «Սիլ» ապրանքանիշի ջրերն են: Գաղտնիք չէ՝ դա պատգամավորի ընտանեկան բիզնեսն է: Խաչատուր Սուքիասյանը, հավանաբար, մի անդավաճան սկզբունք է որդեգրել՝ օգտվել բացառապես իր ընտանիքին պատկանող բիզնեսների ապրանքատեսակներից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 2 + 5 + 8
Կոտայքի լեռներ	- 1 + 2 + 5 + 6
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 + 9 + 11
Գեղարքունիք	0 + 4 + 3 + 6
Լոռի	- 1 + 3 +10 + 13
Տավուշ	+ 2 + 5 +12 + 15
Արագածոտնի լեռներ	- 1 - 5 + 8 + 11
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 5 + 8 + 10

Արարատ	+ 3 + 6 + 9 + 11
Արմավիր	0 + 2 + 5 + 8
Վայոց ձորի լեռներ	0 + 2 + 5 + 8
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 6 + 9 + 11
Սյունիքի հովիտներ	+ 5 + 9 +13 + 16
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 9 +10 + 13
ԼՂՀ	+ 2 + 5 +10 + 13
Երեւան	+ 3 + 5 + 8 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*